ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԼԱՆՋԱԶԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
ЛАНДЖАЗАТСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

ՀՀ Արարատի մարզ ռ. Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (Тел.) 091-58-28-87

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2016 թվականի հունվարի 10-ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:
Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:
Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժկետի, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ - Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2016թ. երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ
2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.
Համայնքապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 326 ընդունելություն:
Համայնքապետի և ավագանու անդամների կողմից քննարկվել են համայնքի
Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Համայնքապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 286 տեղեկանք, ստացել 102-ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները, փոխվել են համայնքի տարածքում գտնվող ցերեկային լուսավորության լամպերը (մասնակի):
Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշգրտման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին [illegible] և սեփական ապահովելու հարցը:
2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 1621.80 հազար դրամ.

բ / գույքահարկ, որից՝ շենք և շինություններ - 250.0հազար դրամ, ավտոմեքենաներ – 2343.2 հազար դրամ

գ / տեղական տուրք՝ 102.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 728.1 հազար դրամ

Համայնքում կազմակերպվել է մի շարք միջոցառումներ.
Հանրապետությամբ նշվել է սեպտեմբերի 21 -ը՝ անկախության օրը , նշվել է նաև ուսուցչի օրը :
Սեպտեմբերի 1-ին համայնքի 1-ին դասարան հաճախող երեխաներին համայնքապետարանի կողմից տրամադրվել է նվերներ .Դեկտեմբերին միջոցառումների շարք է կազմակերպվել երեխաների համար Նոր տարվա կապակցությամբ Ամանորի միջոցառման ժամանակ երեխաներին բաժանվել են նվերներ, հրավիրված են եղել նաև լրագրողներ միջոցառումները լուսաբանելու համար:
Նոր տարվա կապակցությամբ համայնքապետարանը համայնքից ժամկետային զինծառայության մեկնած շուրջ 19 զինծառայողների ընտանիքներին հատկացրել է ֆինանսական աջակցություն
Համանքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2005.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:
Հուղարկավորության նպաստ՝ 60.0 հազար դրամ
Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 471.0 հազար դրամ.արտադպրոցական դաստիարակության համար (Արևշատի երաժշտական դպրոց 50.0 հազար դրամ:
Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1338.4 հազար դրամ.
2017թ 1-ին կիսամյակում նախատեսված է կուլտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ. խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարների մաքրում:
Լանջազատ համայնքում 2017 թ. հունվարի 28-ին նշվելու է Հայկական Բանակի օրը: Հրավիրվածների մեջ լինելու են համայնքի զինծառայողների ծնողներ,հարազատներ և Արտաշատի ԶԿ ներկայացուցիչը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ